# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**2025 թվականի մասնակցային բուջետավորման գործընթացի շրջանակներում Ջերմուկ համայնքից ներկայացված առաջարկ-նախագծերի վերաբերյալ հանրային քննարկման**

**N 1**

ք. Ջերմուկ 20.02.2025թ.

2025 թվականի փետրվարի 21-ին ժամը 11:00-ին Ջերմուկի համայնքապետարանի խորհրդակցությունների դահլիճում տեղի ունեցավ 2025 թվականի մասնակցային բուջետավորման գործընթացի շրջանակներում Ջերմուկ համայնքից ներկայացված առաջարկ-նախագծերի վերաբերյալ հանրային քննարկում: Հանրային քննարկումը կազմակերպվել է ՀՀ կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը» հաստատելու մասին № 1890-Ն, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» թիվ 15-Ն որոշումներին համապատասխան:

Հանրային քննարկման հրավերը հրապարակվել է Ջերմուկի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Մասնակցում էին Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը, այլ աշխատակիցներ և Ջերմուկ համայնքի բնակիչներ:

**Օրակարգում՝**

Ջերմուկ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում ներկայացված տասնհինգ առաջարկ-նախագծեր՝

1. «Բացօթյա կինոդիտում Ջերմուկում», հեղինակ՝ Մեսրոպ Հարությունյան,
2. «Ջերմուկ հեծանվային ակումբ», հեղինակ՝ Մեսրոպ Հարությունյան,
3. «Ջերմոցներ Ջերմուկում», հեղինակ՝ Մեսրոպ Հարությունյան,
4. «Մանուկների աշխարհ», հեղինակ՝ Նորիկ Առաքելյան,
5. «Կեչուտ բնակավայրի խմելու ջրի ցանցի հիմնանորոգում», հեղինակ՝ Ահարոն Ստեփանյան,
6. «Սպորտ-կոմպլեքս», հեղինակ՝ Արայիկ Առաքելյան,
7. Կեչուտ և Գնդեվազ բնակավայրերի համար խմելոի ջրի ախտահանման քլորակայանի կառուցում, հեղինակ՝ Տիգրան Ղուկասյան,
8. «Ջերմուկի մշակույթի, սպորտի և ժամանցի կենտրոն», հեղինակ՝ Հրայր Մկրտչյան:

**Ելույթներ՝**

Ելույթ ունեցավ Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյանը, ով ներկայացրեց, որ ՀՀ կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին

սուբվենցիաների տրամադրման կարգը» հաստատելու մասին № 1890-Ն որոշմամբ ՀՀ մի շարք համայնքներում իրականացվում մասնակցային բյուջետավորման գործընթաց: Դրա շրջանակներում ձևավորված ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից հատկացված ֆինանսավորման գումարի առնվազն 20 տոկոսի չափով պետք է ապահովվի համայնքային բյուջեից համաֆինանսավորում:

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը հայտնեց, որ Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբեր 25-ի № 81-Ա որոշմամբ Ջերմուկ համայնքում 2025 թվականին սկսվել է մասնակցային բյուջետավորման գործընթացը, իսկ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 17-ի № 19-Լ որոշմամբ հաստատվել են Ջերմուկ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը իրականացնելու, գործընթացի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և կառավարման հանձնաժողովի կազմը, լիազորությունները և աշխատակարգը:

Այս որոշմամբ հաստատված ժամանակացույցին համապատասխան, համայնքապետարանի պաշտոնական կայքէջի «Մասնակցային բյուջետավորում-2024» բաժնով ներկայացվել է տասն առաջարկ-նախագիծ, որից երկուսը կառավարման հանձնաժողովի կողմից մեժվել են՝ աշխատակարգով սահմանված չափանիշներին չհամապատասխանելու հիմքով: քվեարկության փուլ անցնող առաջարկների հեղինակներին առաջարկվեց ներկայացնել դրանք:

Հանրային բաց լսումներին ներկա չէին «Կեչուտ բնակավայրի խմելու ջրի ցանցի հիմնանորոգում» ծրագրի հեղինակ Ահարոն Ստեփանյանը, որի փոխարեն այն ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Տիգրան Ղուկասյանը և «Սպորտ-կոմպլեքս» ծրագրի հեղինակ Արայիկ Առաքելյանը, որի փոխարեն այն ներկայացրեց աշխատակազմի առաջատար մասնագետ Անուշ Առաքելյանը:

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը նշեց, որ բոլոր ծրագրերը պետք է բխեն Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից և համապատասխանեն համայնքի զարգացման ծրագրային և ռազմավարական նշանակության փաստաթղթերին, լինեն կապիտալ բնույթի և ավարտվեն 2025 թվականի ընթացքում:

Քննարկումների արդյունքում ներկայացված ծրագրերը մասնակիցների կողմից արժանացան հավանության, դրանց վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեն արվել:

Քննարկումների մասնակիցների ցուցակը կցվում է:

Քննարկումների պատասխանատու և վարող՝

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ
Ա. Ղազարյան

Արձանագրող՝

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝
Ս. Վարդանյան

Նախաձեռնող՝ Ջերմուկի համայնքապետարան

ՑՈՒՑԱԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

| Հ/Հ | Մասնակցի անունը, ազգանունը | Հասցեն | Հեռախոսահամար | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | Հրայր Մկրտչյան | ք. Ջերմուկ Զարեհի 15/8. | 077 388548. | |
| 2 | Մհերան Գոհարյան | ք. Ջերմուկ Կիևյան 9ք. 14.5շ 4բ. | 098509037 | |
| 3 | Մարտն Խաչատրյան | ք. Ջերմուկ Զեյթունյան 2013 թ-ի 8 | 099 118846 | |
| 4 | Հայկազ Հարությունյան | ք. Ջերմուկ, Մ. Գրիգորյան 9/1 | 094004166 | |
| 5 | Հենրիխ Հովսեփյան | ք. Ջերմուկ, Զարեհյան 39/30 | 077155711 | |
| 6 | Զեյնաբի Խաչատրյան | Ջերմուկ, Շահումյան 5/16 | 093991927 | |
| 7 | Յուրիկ Հարությունյան | Ջերմուկ Զարեհի 12/20 | 93 134637 | |
| 8 | Հովիկ Հովսեփյան | Ջերմուկ Զարեհի. 12.20 | 093117832 | |
| 9 | Մուշեղ Մարգարյան | Ջերմուկ. Մ. Գրիգորյան 23/2 | 041808333 | |
| 10 | Դավիթ Հարությունյան | Ջերմուկ Լոմոնոսով Ջեբելայ | 094-55-11-21 | |
| 11 | Ջոն Դալլոյան | Անարգելանքների կենտրոն | 033-70-60-05 | |
| 12 | Հրաչյակ Բաղդասարյան | Հեղափոխության Խարբերդի դեկանատ | 93 833373 | |
| 13 | Համլետ Պետրոսյան | Ջերմուկ Զարեհի. 24.3գ | 098 111-201 | |
| 14 | Սերգեյ Հարությունյան | ք. Ջերմուկ (փող-4, փող-3 գ-1) | 098945984 | |
| 15 | Արմեն Զորյան | ք. Ջերմուկ. Շահումյան 28/1 | 094011510 | |
| 16 | Գիրայր Բաղդասարյան | Սանդրի շտ. գրեյսերատ | 098-66-66-22 | |
| 17 | Աշոտ Հովսեփյան | ք. Ջերմուկ Շահումյան 5/69 | 094 04 05 70 | |
| 18 | Մարատ Հովսեփյան | ք. Ջերմուկ, Գրիգոր | 099 393 777 | |
| 19 | Գրիգորի Հարությունյան | ք. Ջերմուկ Ազատամարտիկների 15/3 | 077577560 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | Ирина Захарьевна | Р. Абрамч Бульварная 16/8 | 098442412 | |
| 21 | | | | |
| 22 | | | | |
| 23 | | | | |
| 24 | | | | |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| 31 | | | | |
| 32 | | | | |
| 33 | | | | |
| 34 | | | | |
| 35 | | | | |
| 36 | | | | |
| 37 | | | | |
| 38 | | | | |
| 39 | | | | |
| 40 | | | | |
| 41 | | | | |